ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**4 հունվարի 2019թ.** **N 1-Ա**
**ք.Երևան**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ (ՄԱՆԴԱՏԻՑ ՀՐԱԺԱՐՎԱԾ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասով, 100-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուների կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված ինքնաբացարկի և մանդատից հրաժարվելու մասին դիմումները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածուներ՝ Նիկոլ Վովայի Փաշինյանի, Տիգրան Արմենի Ավինյանի, Արայիկ Էդուարդի Հարությունյանի, Սուրեն Ռաֆիկի Պապիկյանի, Զարուհի Վալերիանի Բաթոյանի, Էդուարդ Արթուրի Աղաջանյանի, Ռոմանոս Վանիչկայի Պետրոսյանի, Դավիթ Տարոնի Սանասարյանի, Հակոբ Վրեժի Արշակյանի, Արսեն Գևորգի Թորոսյանի, Գարիկ Մնացականի Սարգսյանի, Էրիկ Էմիլի Գրիգորյանի, Գնել Հենզելի Սանոսյանի, Տրդատ Նորիկի Սարգսյանի, Անդրեյ Սերժիկի Ղուկասյանի, Դավիթ Հովիկի Գևորգյանի, Նարեկ Վարուժանի Բաբայանի, Ֆելիքս Խոստեղի Ցոլակյանի գրանցումները

2) «Լուսավոր Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածուներ՝ Քրիստ Հրաչիկի Մարուքյանի, Արմեն Մերուժանի Բաղդասարյանի գրանցումները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Տ. Մուկուչյան**